ԴԱՎԻԹ ԹԻՆՈՅԱՆ
պատմական գիտությունների թեկնածու

ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԵՐԿՓԵՂԿՈՒՄԸ ԽԱՉԱՏՈՒՐ ԳԱՂԱՏԱՑՈՒ ԱԹՈՌԱԿԱԼՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Խաչատուր Գաղատացին Կիլիկիո նվիրապետության հակասական ղեկավարներից մեկն է եղել: Վերջինս առաջին վեհապետն էր սեբաստացի երեք կաթողիկոսների 25-ամյա աթոռակալումից հետո: Սակայն, հենց նրա անվան հետ է կապվում Հայոց եկեղեցու պառակտման հերթական փորձը, որը կարող էր դառնաղետ հետևանքներ ունենալ հայ ժողովրդի և մասնավորապես առաքելական եկեղեցու համար: Նրա աթոռակալման շրջանը համընկավ Հայոց եկեղեցու պատմության մեջ հակասական կերպարի համարում ունեցող Եղիազար Այնթապցու գործունեության հետ: Խաչատուրի ծննդյան թվականը ցավոք հայտնի չէ, դատելով նրա Գաղատացի կոչվելուց վերջինս ծնունդով Գալաթիայից է: Նրա վաղ շրջանի գործունեությունից հայտնի է, որ 1626 թ. Կ. Պոլսում ուսում է առել Կղեմես Գալանոսի մոտ: Ըստ Բ. Կյուլեսերյանի, հենց այս շրջանում է, որ Խաչատուրը անդամակցում է հայ հոգևորականության «լատինասեր» հոսանքին[1]: Ընդհանրապես, 17-րդ դարի առաջին կեսը Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանում աչքի ընկավ այսպես կոչված «ազգային» և «լատինասեր» խմբավորումների պայքարով, որտեղ իր մասնակցությունն ունեցավ նաև Գաղատացին: 1642–1643 թթ. Խաչատուրը զբաղեցնում է Կ. Պոլսի պատրիարքի աթոռը, ան-

---

[1] Տե՛ս «Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441-էն մինչեւ մեր օրերը)», գրեց Բաբգէն Ա աթոռակից կաթողիկոս Մեծի տանն Կիլիկիոյ, Անթիլիաս, 1939, սյուն 383 (այսուհետ՝ Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ):

շուշտ այս ընթացքում նման բարձր և պատասխանատու պաշտոն զբաղեցնելու համար նա պետք է որ լուրջ ազդեցություն ձեռք բերած լիներ, մանավանդ, որ նրա ընտրությունը այսպես կոչված «լատինասեր» հոսանքի հաղթանակն էր[2]: Սակայն նրա պաշտոնավարումը կարճ տևեց: Նախկին պատրիարք Դավթին շուտով հաջողվում է վերստին գրավել պատրիարքական աթոռը՝ այնտեղից հեռացնել տալով Խաչատուրին: Ընդհանրապես, Գաղատացու գործունեության վաղ շրջանում Կիլիկիայում գտնվելու վերաբերյալ որևէ տեղեկություն չկա, որը հիմք է տալիս ենթադրել, որ ի տարբերություն նախորդ աթոռակալների նա շատ ավելի քիչ է կապված եղել Սսի նվիրապետության հետ: Ցավոք, վերջինիս պատրիարքությունից հեռացումից հետո ընկած ժամանակահատվածում գործունեության վերաբերյալ տեղեկություններ գրեթե չկան: Սակայն, հաշվի առնելով պատրիարք Դավթի հետ ունեցած թշնամական հարաբերությունները, ամենայն հավանականությամբ Կ. Պոլսից վտարվելուց հետո նա տեղափոխվել է Կիլիկիա: Այնուամենայնիվ, որևէ ստույգ տեղեկություն Խաչատուրի հետագա գործունեության վերաբերյալ ընդհուպ մինչև 1656 թ. չկա: 1656 թ. հուլիսին Խաչատուրը ղեկավարում է Կ. Պոլսում գումարված սինոդը, ուր կարողանում է լուրջ հարված հասցնել Հակոբ Զուղայեցի Ամենայն Հայոց կաթողիկոսին. ժողովի որոշմամբ վերջինիս անունը պատարագի ճամանակ այլևս չեր հիշատակվելու[3]: 1657 թ. Կիլիկիո կաթողիկոսության պատմության մեջ աննախադեպ իրադարձություն է տեղի ունենում. նույն թվականի ապրիլին Կ. Պոլսում վախճանվում է նվիրապետա-

---

[2] Տե՛ս Ազգապատում, գրեց Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, Ս. էջմիածին 2001, Բ հատոր, սյուն 2931 (այսուհետև՝ Ազգապատում):

[3] Տե՛ս Օրագրութիւն Երեմիա Չելեպի Քէօմուրճյանի: Հավելված թուղթեր, ուղերձներ, գանձեր և ողբեր: Երուսաղեմ, 1939, էջ 198–199 (այսուհետև՝ Օրագրութիւն):

կան այցով այդտեղ գտնվող Կիլիկիո Թորոս Սեբաստացի կաթողիկոսը և նրա փոխարեն Սսի աթոռի նոր նվիրապետ է օծվում Խաչատուր Գաղատացին: Խաչատուրի ընտրության վերաբերյալ ուշագրավ աղբյուր է հանդիսանում Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի թողած հիշատակությունը, ըստ որի «Յաւուրս յայսոսիկ պատրաստութիւն ետես Խաչատուր վարդապետն աշակերտ Տեառն Ոհաննու Եդեսացոյ՝ վասն կաթողիկոսութեան Տանն Կիլիկեայ, և ոմանք ի չարեաց առաջնոցն աղմուկս հանեալ չկամելով զայն: Այլ առաջակայք քաղաքիս ասացին. Տացես մեր եկեղեցեայս Ճական ղուրուշ և գնացեալ առցես. և նա զտալն յանձն էառ հանդերձ ձեռագրաւ, բայց և կրկին չարքն զայն խափանեցին և ոչ տվին կամս սահմանեալ զաղմուկն, բայց նա ի լուռ լեալ գնաց եհան հրաման ի թագաւորէն որպէս օրէն էր, և գնացեալ անդ ի Կիլիկիա»: Փաստորեն, ըստ ժամանակակցի՝ Գաղատացու ընտրությունը կայացել է միայն սուլթանի բարեհաճության արդյունքում և այդ գործընթացին Կիլիկիո աշխարհիկ և հոգևոր ներկայացուցիչները որևէ դերակատարում չեն ունեցել: Նյութի լավագույն գիտակներից Բ. Կյուլեսերյանը կարծիք է հայտնում, որ. «Իրաւասութեամբ կամ ոչ, բայց ամեն պարագայի մէջ, համակրանքով է որ Կ. Պոլիս և Սիս կապուած են իրարու: Կ. Պոլսեցիք ձայն կամ կամք ունին Կիլիկիոյ կաթողիկոսաց ընտրութեան մեջ և ի հարկին Կիլիկիոյ կաթողիկոսներ կը մտնեն կ'ելլեն ազգային-եկեղեցական գործեր կարգադրելու համար»[4]: Բացի դա, ամենայն հավանականությամբ, երջանկահիշատակ կաթողիկոսի ձեռքի տակ է եղել Ե. Քյոմուրճյանի աշխատության ոչ ամբողջական տարբերակը, որն էլ նրան հիմք է տվել Խաչատուրի աթոռակալումը կապել պոլսեցի մեծատունների ցանկության հետ: Սակայն, ինչպես պարզ դարձավ Քյոմուրճյանի հաղորդումից՝

---

[4] Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ, այուն 387:

մեծատուն պոլսեցիների առաջարկին համաձայնվելուց հետո ինչ-ինչ հանգամանքներից ելնելով Խաչատուրը չի ստանում վերջիններիս համաձայնությունը և ի վերջո կորզում է այն օսմանյան սուլթան Մեհմեդ IV-ից: Անշուշտ, ակներև էր այս երկու հոգևոր հաստատությունների սերտ կապն ու փոխազդեցությունը հատկապես 16-րդ դարավերջից սկսյալ, սակայն դրանով հանդերձ Կիլիկիո կաթողիկոսի ընտրությունը մինչ այդ երբևիցե չէր կայացվել առանց տեղի հայկական վերնախավի ներկայության և ցանկության: Բացի դա Կ. Պոլսի թեմը իրավականորեն ենթակա էր էջմիածնի կաթողիկոսությանը, բայց ելնելով քաղաքական շահերից օսմանյան իշխանությունները հաճախ Կիլիկիո նվիրապետության ներկայացուցիչների համար առավել բարենպաստ պայմաններ էին ստեղծում մայրաքաղաքում: Այս իրադարձության շատ փաստեր ցավոք հայտնի չեն և հնարավոր չէ տալ եղելության ամբողջական պատկերը, սակայն եղածն էլ բավարար է պնդելու, որ սա սոսկ հոգևոր ու քաղաքական կապվածության արդյունք չէր կարող լինել և որ այստեղ առավելապես օգտագործելով իր ունեցած կապերն արքունիքում Խաչատուրը կարողացել է այսպիսի աննախադեպ հրաման կորզել սուլթանից:

Խաչատուրի աթոռակալումն անցավ ժամանակաշրջանի ընդհանուր օրինաչափություններին համապատասխան և նրա գործունեությունը սերտորեն փոխկապակցված էր հայոց եկեղեցու պատմության մեջ բավական բացասական դերակատարում ունեցած Եղիազար Այնթապցու անվան հետ: Եղիազարն օսմանյան հայաբնակ շրջաններում մեծ հասարակական ու ֆինանսական ազդեցություն ունեցող հոգևորական էր, 1659 թ. նա նույնիսկ Կ. Պոլսի պատրիարք օծվելու հնարավորություններ ուներ, սակայն ինչ-ինչ հանգամանքներից ելնելով ի վերջո հրաժարվում է այդ բավական ազդեցիկ դիրքից հօգուտ Մար-

տիրոս Կաֆացու[5]: Այդուհետ Եղիազարը տեղափոխվում է Երուսաղեմ. որպես ընդհանուր վերակացու և Կ.Պոլսի պատրիարքի ներկայացուցիչ: Այնթապցին իր էությամբ լինելով խիստ փառասեր ու իշխանատենչ անձնավորություն, բնականաբար, կարճ ժամանակամիջոցում կարողանում է առանցքային դերակատարում ստանձնել Երուսաղեմում: Դեռ Փիլիպպոս Աղբակեցու վախճանից հետո Եղիազարը փորձեր է կատարում զբաղեցնել Ամենայն Հայոց կաթողիկոսի գահը, սակայն դրա ձախողումից հետո նա փաստացիորեն չհրաժարվելով այդ գաղափարից իր հետագա գործունեությունն ուղղում է դրա իրականացմանը: Փաստացիորեն, իր ձեռքը վերցնելով Սբ. Հակոբի վանքի կառավարումը՝ նա լայն շինարարական աշխատանքներ է ձեռնարկում: Հատկապես արժանահիշատակ է նրա կողմից Սբ. Հակոբի վանքի կից կամարակապի վերածումը եկեղեցու և օծումը էջմիածին անվամբ: Սրանով նա բացահայտորեն ի ցույց դնելով իր կաթողիկոսական նկրտումները՝ միաժամանակ հասկացնում էր, որ սեփական փառասիրության բավարարման համար ամենևին էլ պարտադիր չի լինի իր ներկայությունը Մայր Աթոռում և որ այդ դեպքում հայոց հոգևոր կենտրոնի դերակատարում կարող է ստանձնել նաև Սբ. Հակոբի վանքը: Սակայն, մինչ այդ Եղիազարը փորձեր կատարեց էջմիածնում հիմնավորվելու ուղղությամբ, մանավանդ, որ այդ հարցում նա ուներ նաև դաշնակիցներ ի դեմս էջմիածնի մի շարք միաբանների, մասնավորապես՝ Օնոփրիոս Երևանցի վարդապետի[6]: Սակայն այս փորձը հաջողությամբ չի ավարտվում և Այնթապցին, ի վերջո, հանգում է իր գլխավորությամբ էջմիածնի և Սսի կաթողիկոսություններից առանձին նվիրապե-

---

[5] Տե՛ս Ազգապատում, սյուն 2933:

[6] Տե՛ս Զաքարիա Քանաքեռցի, Պատմագրութիւն, հ. Բ, Վաղարշապատ, 1870, էջ 71:

տական աթոռ հիմնելու գաղափարին: Այս հարցում որպես Եղիազարի դաշնակից հանդես է գալիս Խաչատուր Գաղատացին: Չնայած, որ Եղիազարը և Խաչատուրը ոչ վաղ անցյալում հանդես էին գալիս որպես կատաղի հակառակորդներ, այնուամենայնիվ հենց միջև է կայացվում համաձայնություն: 1663 թ. Երուսաղեմ այցելած Կիլիկիո նվիրապետը փաստացիորեն տալիս է իր համաձայնությունը: Ըստ նախնական պայմանավորվածության՝ Սսի կաթողիկոսի իրավունքներն իր վիճակների վրա պահպանվում էին, էջմիածնական թևի ենթակայության տակ էին շարունակելու մնալ Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող հայկական և հայաբնակ գավառները: Նորաստեղծ հակաթոռ կաթողիկոսության ենթակայության տակ էին հայտնվելու օսմանյան պետության մեջ մտնող մնացյալ՝ Կիլիկիո թեմերից դուրս գտնվող հատվածը: Խաչատուրի համաձայնությունը և նրա կողմից օրհնություն ստանալը Եղիազարի համար խիստ կարևոր էին, քանզի միայն այդ ճանապարհով հնարավոր կլիներ իրավական առումով հիմք նախապատրաստել նման մեծ հավակնություններին: Անշուշտ, առաջին հայացքից տարակուսելի է Խաչատուրի համաձայնությունը, որքան էլ որ վերջինիս համար անընդունելի լիներ էջմիածնի գերակայությունն ընդհանրապես, այնուամենայնիվ, նոր հովվապետության ձևավորումն օսմանյան պետության սահմաններում խիստ անցանկալի պետք է լիներ առաջին հերթին Կիլիկիո աթոռի համար: Խաչատուրի համաձայնությունը մի շարք հեղինակներ փորձել են հիմնավորել, այսպես Մ. Չամչյանի կարծիքով. «Եւ զի Խաչատուր էր պարզամիտ...»[7]: Իր հերթին, Հ. Անասյանը Խաչատուրի այս որոշումը փորձում է մեկնաբանել, որպես հակաթուրքական ճակատ կազմելու նա-

---

[7] Միքայել Չամչյանց, Հայոց պատմություն, հ. Գ, Երևան, 1984, էջ 697:

խագծի մի մաս[8], սակայն կարծում ենք, որ որքան էլ ներսից փտած պետություն լիներ Օսմանյան կայսրությունը, Եղիազարի աթոռակալումը չէր կարող իրականանալ, եթե այն ունենար թեկուզև թաքցված հակաթուրքական ուղղվածություն: Ընդհակառակը, կայսրության տարածքների համար նախատեսված հակաթոռ նվիրապետության գոյությունը բխում էր առաջին հերթին հենց Բարձր Դռան շահերից և այս համատեքստում Հ. Անասյանի առաջ քաշած վարկածը թույլ հիմքեր ունի: Բ. Կյուլեսերյանը որակում է վերջինիս գործունեությունը որպես «անխոհեմ և վտանգաւոր»[9]: Տ. Սավալանյանցը Խաչատուրին ներկայացնում է որպես միամտացած անձ, քանզի «Խաչատուր կը հաւանէր՝ առանց թափանցելու ազգային ամբողջութեան սպառնացող վտանգն...»[10]: Կարծում ենք, որ այստեղ դերակատարում կարող է ունեցած լինել Եղիազարի ունեցած հարստությունը, որը կարող էր պատճառ դառնալ Խաչատուրի տված համաձայնությունը հասկանալու հարցում: «Խաչատուր համոզուեցաւ, քանի որ իրեն վնաս պիտի չհասնէր, էջմիածին պիտի տկարանար, եւ անշուշտ ծառայութեանը փոխարէն պատշաճ վարձն ալ սակարկուած էր...»[11]: Սակայն, սա Ասի կաթողիկոսի միակ սխալը չէր, եթե նախորդ քայլով նա երկպառակչություն սերմանեց հայոց եկեղեցում, ապա նրա հաջորդ քայլը նման իրադրություն ձևավորեց նաև ասորական եկեղեցում: Ընդառաջ գնալով ասորի Անդրեաս եպիսկոպոսի խնդրանքներին՝ նույն 1663 թ. Հալեպում վերջինիս օծում է կաթողիկոս, այսպիսով ձևավորելով հակաթոռ ասորական նվի-

---

[8] Անասյան Հ., XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1961, էջ 250–254:
[9] Պատմութիւն Կիլիկիո կաթողիկոսաց, սյուն 389:
[10] Տիգրան Հ. Թ. Սաւալանեանց, Պատմութիւն Երուսաղէմի, առաջին հատոր, Երուսաղէմ, 1931, էջ 608:
[11] Ազգապատում, սյուն 2962:

ռապետություն ևս: Անշուշտ, այստեղ դերակատարում ունի նաև այն հանգամանքը, որ Անդրեասի օծման հարցում օգնել է նաև տեղի Մուրթազիմ փաշան[12]: Որևէ ստույգ փաստեր ցավոք պահպանված չկան, սակայն կարելի է ենթադրել, որ այս անգամ ևս դերակատարում է ունեցել Սսի կաթողիկոսի դրամասիրության հանգամանքը: Ահա այս վերջին ձեռնարկն էլ առիթ հանդիսացավ երկպառակչության համար արդեն Կիլիկիո կաթողիկոսի նվիրապետության սահմաններում: Բերիայի եպիսկոպոս Դավիթ Կարկառեցին պատճառ բերելով հայության շրջանում Խաչատուրի ընկած հեղինակությունը կարողանում է Հովհաննես պատրիարքից համաձայնություն ստանալ Կիլիկիո կաթողիկոս օծվելու հարցում: Դա տեղի ունեցավ 1663 թ. Կ. Պոլիս կատարած նրա այցի ընթացքում: Վերադառնալով Հալեպ ստանալով նաև ասորիների բուն կաթողիկոսի աջակցությունը Կարկառեցին օծվում է կաթողիկոս[13]: Անշուշտ, այս պայքարը զերծ էր որևէ տեսակի գաղափարական կռվանից, այն ընդամենը պայքար էր ազդեցության և իշխանության համար, որի դառնաղետ հետևանքներն իրենց բացասական լուրջ հետևանքներն էին ունենալու թե՛ հայոց եկեղեցու և թե՛ պետականազուրկ հայ ազգի համար: Սա արդեն հարվածում էր Կիլիկիո կաթողիկոսի կենսական շահերին, ուստի լուրն ստանալուն պես Խաչատուրը շտապեց Կ. Պոլիս՝ այնտեղ կաթողիկոսության հարցերը լուծելու համար: Այս հանգամանքը, որ կաթողիկոսական հարցի լուծման բանալին գտնվում էր արդեն Կ. Պոլսում, Խաչատուր Գաղատացու անհեռատես ու եսամոլական քաղաքականության լավագույն ցուցիչն է: Եվ դա ցուցանում է այն հանգամանքը, որ գեթ այս շրջանում Կիլիկիո կաթողիկոսությունը լիովին կորցրել էր իր նախկին ազդեցութ-

---

[12] Տե՛ս Պատմութիւն Կիլիկիո կաթողիկոսաց, սյուն 390:
[13] Տե՛ս Ազգապատում, սյուն 2961:

յունն ու դիրքը: Սա արդեն երկրորդ հակաթոռ կառկառեցի կաթողիկոսն էր Կիլիկիո նվիրապետության պատմության մեջ: Ինչևէ, Կ. Պոլիսը վերածվել էր հայոց արևմտյան հատվածի հոգևոր կենտրոնի և Դավիթը ևս ստիպված էր ստանալ այդ աթոռի համաձայնությունը: Իրավամբ ձևավորվել էր բավական անտրամաբանական մի իրավիճակ, երբ Կ. Պոլսի աթոռն իրավականորեն, թեկուզև հաճախ ձևական շարունակում էր հանդիսանալ էջմիածնին ենթակա հաստատություն: Դրանով հանդերձ գերակա դիրք էր գրավել իրենից աստիճանակարգով ավելի բարձր նվիրապետության հանդեպ: Ուստի Կարկառեցին ևս իր շահերը պաշտպանելու համար շտապեց ներկայանալ մայրաքաղաք: Նման պայմաններում Կ.Պոլսի պատրիարք Հովհաննեսը, ելնելով իր իսկ աթոռի շահերից, կայացրեց բավական հեղհեղուկ որոշում, այն է՝ երկու կաթողիկոսներն էլ շարունակելու են պաշտոնավարել յուրաքանչյուրը Կիլիկիո կաթողիկոսության իր հատվածում: Սրանով փաստորեն իրավական ճանաչում տրվեց կաթողիկոսության երկփեղկմանը[14]: Անշուշտ այս որոշումը հետագայում պատրիարքին հնարավորություն կտար իրեն ցանկալի ժամանակահատվածում միջամտել Կիլիկիո նվիրապետության գործերին: Խաչատուրն, ըստ էության, ստիպված էր համաձայնել: Վերջինիս հաշտվողականությունը Մ. Օրմանյանը բացատրում է այս շրջանում Ե. Այնթապցու ձեռնարկած հերթական ծրագրով[15]: Բանն այն է, որ այս նույն շրջանում Եղիազարը, որը չէր հաշտվել առանձին կաթողկոսություն հիմնելու գաղափարի ծախողման հետ, նորովի է գործի լծվում և կարողանում է օսմանյան արքունիքին կաշառելով համոզել և ստանալ Երուսաղեմ կենտրոնով նոր կաթողիկոսություն հիմնելու հրաման: Նորաստեղծ աթոռի ենթա-

---

[14] Տե՛ս նույն տեղում, այուն 2964:
[15] Տե՛ս նույն տեղում, այուն 2965:

կայության տակ էր լինելու կայսրության հատվածի հայությունը, բացառությամբ Կիլիկիո թեմերի: Անշուշտ, սա օսմանյան կառավարության համար բավական ձեռնտու գործարք էր, քանզի սրանով հաստատվում էր իրենց, ըստ էության, ուղղակի կառավարումը հայության հոգևոր կյանքում: Իսկ Խաչատուրի զիջողականությունը, այս պարագայում, կարծում ենք, պայմանավորված էր ոչ այնքան հայ եկեղեցին հերթական, երկպառակչական խմորումներից զերծ պահելու ցանկությամբ, որքան որ պոլսեցի հայ երևելիների, մասնավորապես՝ Ե. Չ. Քյոմուրճյանի կամքով: Այդուհետ կորզելով համաձայնությունն Եղիազարը շտապեց Բերիա և այնտեղից էլ նամակով դիմեց դեռևս մայրաքաղաքում գտնվող Խաչատուրին՝ իր գործակցին հրավիրելով շտապ վերադառնալ Բերիա: Ահա այստեղ, ըստ Մ. Օրմանյանի «Որչափ ալ Խաչատուր արդէն իր գործակցութիւնը խոստացած էր, բայց երբ գործադրութեան վայրկեանը հասաւ, յանկարծ վարանեցաւ եւ կերպով մը խղճի խայթէ ազատուելու համար, ուզեց գաղտնի խորհուրդ քանի մը խելահասներու հաղորդել»[16]: Այստեղ սակայն, ինչպես վերը նշվեց, առավելապես դերակատարում ունեցավ պոլսեցի երևելիների կարծիքը և հենց վերջիներիս խորհրդով էլ ի վերջո Խաչատուրը հրաժարվում է Եղիազարի հետ համագործակցելու գաղափարից: Գալով Արևելք սակայն երկու պատվիրակներն էլ ձախողվում են, նրանց չի հաջողվում տարհամոզել Եղիազարին հրաժարվել իր մտադրությունից: Նման պայմաններում Խաչատուրին ոչինչ չէր մնում, քան ենթարկվել սուլթանական հրահանգին և նույն 1664 թ. վերջին կաթողիկոս օծել Այնթապցուն: Այնուամենայնիվ, վերադառնալով Կիլիկիա, Գաղատացին կարողանում է հիմնականում լուծել իր կաթողիկոսության միասնության խնդիրը: Բանն այն է, որ Դավիթ Կարկառեցին վերա-

[16] Նույն տեղում:

դառնալով Հալեպ տեղի բնակչության կողմից չի ընդունվում որպես կաթողիկոս: Դա սակայն չի խանգարում վերջինիս հետագայում ևս օգտագործել կաթողիկոսական աստիճանը տարբեր տեսակի գրագրություններում: Այդուհանդերձ, Կիլիկիո կաթողիկոսության միասնությունը վերականգնվում է:

Առանձին ուսումնասիրության նյութ է անշուշտ նաև Խ. Գաղատացու մասնակցությունը հայ ազատագրական շարժմանը: Հեռու լինելով փաստերը գունազարդելու գայթակղությունից նշենք՝ միայն, որ վերջինս 1662 թ. նամակով դիմում է Ալեքսանդր VII պապին, ընդունելով նրա գերիշխանությունը: Նույն 1662 թ. նամակով Գաղատացին դիմում է նաև Ֆրանսիայի արքա Լուի XIV-ին, ապա և 1663 թ. Անտիոքի հույների պարիարք Մակարի և Հալեպի հակոբիկ ասորիների կաթողիկոս Անդրեասի հետ միասին օգնություն է խնդրում Ֆրանսիայի արքայից թուրքական լծից ազատագրվելու համար[17]: Պետք է նշել, որ քննարկվող ժամանակաշրջանում ֆրանսիական հնարավոր արշավանքի հավանականությունը բավական մեծ էր և Խաչատուրի նամակները պետք է դիտարկել հենց այս համատեքստում: Հարկ է նշել, որ բավական ակտիվ էին Կիլիկիո նվիրապետի շփումները նաև վենետիկցիների հետ, այսպես 1657 թ. ապա և 1668 թ. Խաչատուրն այցելում է Կանդիա՝ Կրետե, ուր հանդիպում է վենետիկցիների հրամանատար Ֆր. Մորոզինիի հետ[18]: Խաչատուր Գաղատացու մահվան ստույգ թվականը ցավոք հայտնի չէ, հայտնի է միայն, որ 1674 թ. Կիլիկիո կաթողիկոս է ընտրվում Սահակ Քիլիսցին, որից էլ կարելի է ենթադրել, որ նրա նախորդ Խաչատուրը մահացել էր նույն թվականին:

---

[17] Անասյան Հ. Ս., նշվ. աշխ., էջ 98: Նամակի բնագիրը՝ էջ 279–285:

[18] Ալիշան Ղ., Հայ-Վենետ կամ հարընչությունք հայոց և վենետաց ի ԺԳ-դ և ԺԵ-զ դարս, Վենետիկ, սբ. Ղազար, 1896, էջ 179:

ДАВИД ТИНОЯН
кандидат исторических наук

РАСКОЛ В КИЛИКИЙСКОМ КАТОЛИКОСАТЕ В ПРАВЛЕНИЕ ХАЧАТУРА ГАЛАТАЦИ

РЕЗЮМЕ

Хачатур Галатаци один из самых неоднозначных деятелей в истории Армянского киликийского католикосата. Он стал первым епархом на Сисском престоле, после правления трех себастийских католикосов. В 1642–1643 годах. Галатаци занимал пост главы костантинопольской епархии. В 1657 г. Хачатур был помазан киликийским католикосом. Именно в годы его правления епархиат вновь оказался под угрозой раскола. Более того, в связи с деятельностью Егиазара Айнтапци перед такой угрозой предстал и Эчмиадзинский католикосат. Галатаци сам участвует там в междоусобице и, в частности, помазывает Айнтапци эчмиадзинским католикосом. За это Айнтапци помогает ему устранить от власти своего противника Давида Каркареци. Хачатур Галатаци является яркой персоной армянской национальной освободи-тельной борьбы в позднем средневековье.

DAVIT TINOYAN
PhD in History

THE SHCISM IN THE CILICIAN CATHOLICOSATE DURING THE REIGN OF CATHOLICOS KHACHATUR GALATACI

SUMMARY

Khachatur Galataci was a famous figure in the history of the Armenian Cilician Catolicosate. Khachatur Galataci was a prominent figure of the Armenian national liberation struggle in the late Middle Ages.